

ԿԱԺՍԵՆ ԱՐԴՈՒԹՅՈՒՆ
 Պոչկախայ համար
 արեկը 12 Գ-
 Վեճախայ 1.6
 Առատու ախիւմ
 մար Տարեկան 1.5
 Վեճախայ 8
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 50
 Վեճախայ 1.50
 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎՃԱԿԻՆԻ
 Երևանցի սոցիալա-
 ղին երեսին համար 400-
 իսկ վերջին երեսի
 ար 20 սանթիմ է. երեքին
 անցի անգլաներու համար
 20 Սոյ գեղջ կրչայ:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ

ՉԱՐԹՈՒՄ

R. P. Kalemecian, Mozhikyan
 (Auteurs)
 Kasse W. 4
 Vienna

Число 385
 Число 385
 ar a
 du journal
 Chajoun
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

(20 ՈՒՆԻՍԻ)
 Պոչկախայի համար ձեռք
 = 15 ՍԱՆԹԻՄ =

ՇԱՐԹՈՒՄԻ ՆՈՐ ԿԱՅԵԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԳՆԵՐ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԻՎ ՎՃԱՐԻ

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ


Գլխավոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇ-
 ԽՈՒՈՐԵՍԱՆ ԱՍՅՈՒՍ ԲԱՆԱՔԻ ՎԻՃԱ-
 ԿԱՂԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոմսակ գնել փոփոգողները կրնան իրեն գիմել

Ձար-Պորխ փողոց Վառնա

ԶՈՒՐ ԶԱՆՔԵՐ



Սայիդ փաշան նախարարացեալ
 դառնալուց անմիջապէս յետոյ,
 եւրոպական մամուլի մէջ լուրեր
 տարածվեց որ նոր վէպիւրը ամէն
 ճիգ թափում է իր պաշտօնի ան-
 կախութիւնը պահպանել, Եւր-
 ասիայի ազդեցութիւնը կտորել,
 որպէսզի կարողանայ երկրի ներ-
 քին վիճակը և Ֆրանսական
 գործիքները բարեկարգել:

Արեւմտ դրանով, եթէ միայն
 ճիշդ են այդ բոլորը, Սայիդ
 կախ Տրատարակեց թէ Սուլթան-
 նի թէ նրան ազդող, կաշառա-
 կէք և գազան սիրելիներէ գէտ:
 Սայիդ փաշան իր առաջին
 հարածը ուղղեց թրքական ծո-
 վայիքի հափարար Հասան փաշա-
 յի գէտ, որ թրքական գող պաշ-
 տօններէ մէջ ամենամեծ գողն
 է համարվում. սակայն այդ ամե-
 նամեծ գողը Սուլթանի և նրա
 սիրելիների ամենամեծ բարե-
 կամն է. Եւրոպական թերթերը
 այդ մասին մի քանի շաբաթ ա-
 ռաջ գրեցին. բայց այնուհե-
 տեւ այդ խնդրի մասին կատար-
 եալ լուրերին տիրեց:

Ամեն մի քիչ թէ շատ խելքը
 գլխին թուրք գիտէ որ թուրքի-
 ալի տունը քանդողը գողութիւնը,
 կաշառակերութիւնը և գազանու-
 թիւնն է. և այդ բոլորը այն-
 քան խոչոր, այնքան հակառակ
 շահերով են ու հնացած որ մի
 Սայիդ փաշա—ծերացած, եռան-

դը կորցրած քաղաքական գոր-
 ծիչ, որչափ էլ արամողիւր լինի
 թրքական երկիրը կործանող,
 քարուքանդ անող այդ ախտերը
 արմատախիչ անել, անկարելի
 պէտք է լինի:

Թուրքիան պէտք է ջախջախ-
 ուի, իր Սուլթանի, իր պաշտօն-
 եաների ձեռքով: Թրքական մի-
 ապետութիւնը ապագայ չունի,
 իսկ ժողովուրդը սահմանագրա-
 կան կառավարութիւն ստեղծելու
 ընդունակութիւնը չունի: Սայիդ
 փաշայի ջանքերը, եթէ ճիշդ
 են, զուր են:

ՎԱՊՈ

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՆԻԻԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Արտասահմանի մէջ բազմաթիւ
 թերթեր և հանդէսներ կը հրա-
 տարակուրեն, սակայն ատենցմէ
 ոչ մին ապահով վիճակի մէջ կը
 գտնուի: Հանդէսներէն՝ Համալ-
 սարան, Գուլթան, Բանասէր, Ա-
 նահիտ, կազմի կազմ կը հրատա-
 րակուին: Թէև անոնց տարածու-
 մը տեղի կունենայ ոչ միայն արտա-
 սահմանի, այլ և կովկասի ու
 Ճանկաստանի մէջ: Այդ հանդէս-
 ներուն ոչ միայն բաժանորդները
 շատ քիչ են, այլ և եզածներէն
 մէկ կարեւոր մասը բաժնեգիրը
 չի վճարեր:

Ենթադրենք որ այդ հանդէս-
 ներու անապահովութեան գլխա-
 ւոր պատճառը մայր երկրէն հե-
 ռու ըլլալը և մասնագիտական
 բնակարաններին ըլլալ, սակայն
 կովկասի մէջ հրատարակող ծա-
 րադ—Աղբիւրն ալ անհապով
 վիճակի մէջ կը գտնուի, չը նա-
 յիլով որ արդէն քսան տարի է
 որ կը հրատարակուի: Կովկասի
 երկու օրաթերթերէն միայն
 «Մշակ» ապահովուած կարելի է
 համարել, նոր—Գարն ալ կը կա-
 ղայ, իսկ արտասահմանի բոլոր
 թերթերն ալ անապահով են:

Կովկասի մէջ ծարադ—Աղբիւրի
 յոգնած խմբագիրը—վերջին ճի-

գերը հաւաքած գիւտմ կընէ
 ժողովրդին բաժանորդ գրուել
 Արտասահմանի մէջ Համալսա-
 րանի խմբագրութիւնը բաժա-
 նորդ կուզէ և աննելիքները կը
 պահանջէ. ու մեր ամէն հան-
 դէսները ամէն թերթերը գրեթէ
 այդ վիճակին մէջ կը գտնուին:
 Ապահովեն միայն Բազմազէպ,
 Հանդէս Ամսօրեա, Գրոշակ և
 նոր և անք որովհետեւ ատենք
 մեծ հաստատութիւններու կը
 պատկանին:

Եթէ մեր թերթերու և և հան-
 դէսներու թիւն նայինք, հայը
 չափազանց ընթերցասէր ժողո-
 վուրդ մը պիտի ներկայանայ մեզ:
 Իսկ եթէ այդ լրագրութեան ամ-
 բողջ բաժանորդներուն թիւը աչ-
 քի առաջ ունենանք, պիտի հա-
 մոզուինք որ մեր ամբողջ ազգա-
 յին թերթերուն և հանդէսնե-
 րուն բաժանորդներուն թիւը
 եւրոպական փոքրիկ ժողովուրդի
 մը մի լրագրի բաժանորդներուն
 գումարին հազիւ հաւասարի:

Այս երեւոյթի պատճառներուն
 վրայ ուրիշ յօդածով մը պիտի
 խօսինք:

ՀԻՒԼԻ

ԽՈՐՀՐԳ-ԱՍՈՒԹԻՒՆ ՍԸ

Քանիցս «Գրոշակ»-ի արժու-
 մի և ազգային ուրիշ թերթե-
 րու մէջ խնդիր եղաւ «Հայրե-
 նի»-ի մէջ Ազգ. խնդրով բանտար-
 կուած կամ աքսորուածներու օգ-
 նութեան մասին:

Մանաւանդ վերջերս Ատրիա-
 նուպոլոյ մեծ հերոսներէն մէ-
 կուն (Սէրէմեճեանի) կրակոտ գըր-
 ուածքներն ի լոյս տնկելով, անոր
 արգելաբար նոյն նպատակին
 յատկացնելու առաջարկ մը կը ը-
 լար հնարժուսի խմբագրութեան
 կողմէ, արգարեւ գովելի առա-
 ջարկութիւն, մէկ քարով երկու
 թռչուն զարնելուն առիթը կը
 ներկայանար, վասնզի նախ պի-
 տի կարենայինք իւրաքանչիւրս
 մեր կարողութեան չափով գործ.

նախանայէն պատշաճ յարգանքը
 քննալել, կունգնելու անմոռաց
 արձան մը հերոսին որ իսկապէս
 անձնազոհութեան մարմնացումը
 հանգիստացաւ և որոնց նմաննե-
 րու յիշատակին առջեւ ակնա-
 ծանքով ծունր գնել, մեր ամէն
 մէկերնու սեպուհ պարտականու-
 թիւնն է:

Ու այդ առիթով պիտի կարե-
 նայինք միանգամայն օգնել այն
 անձնազոհ կորիճներուն որոնք
 հայրենիքի Ա. դատին համար
 աշխատած ատեննին հակառակ
 իրենց ըզձանքին ողջամբ ինկած
 են վայրագ թշնամիին ձեռքը.
 որն որ ըստ իւրըմաց քոմմեթի
 կերպով կը շտանջէ զանոնք:

Սակայն այսօրս որ տկար ար-
 ձագանք գտաւ չայդ գնահատելի
 առաջարկը ժողովրդին կողմէ,
 այն ժողովրդին որ քանի մը օրեր
 առաջ, յարտասուս ի յաջ հոգե-
 հանգիստի հանդէսներէ կատա-
 րէր, դրուատիքներ ձօնելով
 անձնուրաց նահատակներուն եւ
 վրէժի շանթեր արձակելով մեծ
 ոճրագործի հասցէին:

Հայրենիքի աշխարհապահ
 րէն ետք, տակաւին այսչափ ան-
 տարբերութիւն, արգարեւ ա-
 մօթ:

Երբ գիտենք թէ մեզմէ իւրա-
 քանչիւր, այդ հերոսներուն հետ
 հաւասար չափով պարտականու-
 թիւններ ունինք զէպի տոհմային
 հայրենիքի միանգամայն խղճե-
 նիս կը վկայէ թէ մեզմէ ստուար
 մէկ մեծամասնութիւնը, որու ան
 մէջ գէթ մէկ ժամ չենք զոհեր
 մտածելու մեր հայրենիքի և ազ-
 գութեան արդի դարհուրելի վի-
 ճակին վրայ, մեզմէ պահանջ-
 ուածը ինքնին շատ աննշան զո-
 հողութիւն մը համարելով այդ
 անձնուրաց հոգիներու թանկա-
 գին զոհողութիւններու հետ և Ա.
 պա ուր կը մնայ մեր անձնապէս
 զոհուելու խնդիրը:

Արտասահմանի մէջ ապրող ե-
 րիտասարդ եղբայրներ, ձեր մէ-
 ջէն քիչ չէ անոնց թիւը որ թր-
 քական զնդաններու զժբաղդ այ-
 ցելութիւնն ունեցած են, ան-

գամ մը վերջի չի ցէք այդ գծոյք շէնքերը ուր փառաբանութեամբ ան մեր երիտասարդութեան թանկագին մէկ կարեւոր մասը, որոնք մեզմէ տարբեր կերպով բնութեամբ էին իրենց ստորապատկանութիւնը և ոչ թէ մեզ նման պղտատնական հայրենասէրներ կ'լիար են, զէթ իրենց զընդանի կեանքին մէջ գործնականապէս ցոյց տանք մեր համակրանքը. շրջանները վերինը, որպէսզի մարտնչեն շանցունները, որոնք որ տղան կը ծառայէ ապերախտի մը կը ծառայէ: Արտասահմանի մէջ չկարենանք փոքրիկ զոհողութիւններ բնութեամբ փարձուիլ. հասարակօրէն չպէտք պարենանք մեծ զոհողութիւններ ընելը սորովիլ, առանց որոյ ազատութեան նշոյլն իսկ տեսնել անկարելի է:

Ուշագրութիւններն զարձաններ հոն, ուրկից մեր շղթայապերկեցրալորներու սրտամորմոք հառաչի ձայնը կուգայ, եթէ անձնապէս չենք կարող անոնց շարժարեւրութիւնը բնիլ գէթ կանոնք մտնելու. լքանելու ոճիրը չգործենք:

ՌՈՒՍԱՆԱՀԱՅ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ

Մեր նախորդ յօդուածով խոստացած էինք նաև ուսումնական քահանաներու իւրաքանչիւրին նկարագիրն ընել՝ առանց անհատութեան ու վերապահութեան:

ԲՍՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՀԱՍՎԱՆԱԼԻՆ

ՄԱՅԻՒ
IV

Վարդաշապատի սյգիներին մէկում մի շարք հսկայական թրթռնի տակ նստել են մի 20 հոգիի շարք երիտասարդներ և մի քանի օրիորդ: Այդ խմբի մէջ են դասնում նաև Վահէն և Զարուհին: Ծննդաբան տեղացի ուսուցիչներին մին դրանց ճաշէ հրապարակին: Երիտասարդները զբաղված են գրուցելով. խմբի մէջ ուշադրութիւն է գրավում և մի երիտասարդ, դէմքով վարդապետ: Խոսում է վարդապետը, և ամենքը ուշադրութեամբ լսում են, նրան:

— Այո բարեկամներ, ես վեղարը գիտի, կարծելով որ վեղարը դիտու կարող եմ աւելի օգտակար լինել մեր ժողովրդին. սակայն այդպէս չեղաւ. վեղարը դնելով ինձ հպատակացիի այն բնամտ, դատարկազուլ, անբարոյական եպիսկոպոսներին, որոնք աշխարհական ժամանակ մի տեսակ ակնածանքով էին վերաբերվում դէպի ինձ:

Այն ժամանակ նրանք ինձ իրենցից բարձր էին գգում, որովհետեւ ես անկախ էի, համալսարանական կրթութեամբ աշխարհական, իսկ այսօր ես

թէ կրնայինք անոնց աւարտները մանրամասնօրէն ներկայացնել ընթացողաց, բայց խիստ ճանաչողութեամբ ու զգուշիլ ըլլալով այդ բան, մանաւանդ ինչպէս շարժումի օգտակար էլ ինչպէս երկար րարակ զբաղեցնել այդ փրկանաւոր վորձանքներու շահատակութիւններով, աւելի յարմար կը համարենք սմբովելու անոնց համարում, իրական ու որոշ ամբողջը մէկ յօդուածով մէջ. և ապա անցնել յաջորդով սուսանահայ կեանքին ճշգրիտ հետազոտութեան:

Ինչպէս յիշած էի, Ռուսաստանի մէջ 18-20 քահանաներ կը գտնուին, որոնց յայտագիրը կայ զաւ զնելով ստորակայ տողերուն մէջ. կը յանձնենք հայ ժողովրդի ուշադրութեան, յուսալով ինչ այսպէս ապահովութեան շանայ հաց ու աղ տայ այսպիսի ձրիակեր ձախաւետներու, որոնք քահանայ չըլլալէ վատ ամէն ինչ են:

Պատասխան. — Կը քահանայագործէ Տ. Երևանու Յովնանիսեանը, բնիկ Մուշի Ռուսիական գիւղէն. այս մարդը քանի մը անգամ ամբողջ Ռուսաստանի պատած և մաղած է, ուր որ հանդիպած է անշնորհ արարքներու սղոտտ հետքերը թողած է. մանաւանդ թուրքա, Բաթին լայն անսով կոչու ու կոպիտ, աղք ու սղոտ արարած մը, թող այս գրել կարող չիլիսէր, գոնէ խոսուածքն ալ չը հասկցուիր. զգուշանալ ասկէ:

Գոնարանցաւ. — Տ. Յակոբ Դատասարեան՝ Նիկոմիդիոյ Պարաիզակ գիւղէն, Համեստ ու արթուն անձ մը. իր կարողութեան սահմանին մէջ վաշիչապէս կը հովուէ հօտը, Գոնգի իր դէմ գանդապահներ ըլլան, բայց այդ ամէնը կուսակցամտութեան արդիւնք պէտք է համարել: Բարի է ու բարեգործութեան ալ ետ չը կհանարակ արեղա իմ և այդ եպիսկոպոսներին ստորադրելով. պատկանում եմ իրենց դատարարին և գտնվում եմ ամենատար աստիճանի վրա: Ես վեղարը գրի որպէս զի աւելի դիւրութեամբ ազատօրէն ժողովրդի մէջ մտնում. բայց այսօր ես աւելի կտրված եմ ժողովրդից, որովհետեւ ինձ ժողովրդական ոչ մի պաշտօն չէ տրվում:

Ժողովրդից կարված եմ. ժողովրդի մէջ չեմ. որովհետեւ ոչ մի առաջնորդ չի ցանկանում ինձ իրեն օգնական ունենալ. ինձ ո և է թեմ կամ վիճակ չեն յանձնում անկախօրէն կառավարելու. ու ես ստիպված եմ ապրել ինչպէս զգաթի մէջ, ուր թաղապետը և տղիտութեանը խաւարը, կիրքը նախանձը, ամեն մի վատ մտլութիւն ինչ որ մարդը կարող է երեւակայել:

— Որքան կրկին այդ վեղարը թողէք, և իրեն աշխարհական գործեցէք ժողովրդի մէջ, միշտ մտնեք Վահէն:

— Ծիծղ էք ասում, այդպիսի պարզաներում այդպէս պէտք է վարվել ու շատ անգամ իմ մտքով տնցել էի այդ քայլը անէլ. բայց մտածել եմ զուցէ ժամանակը փոխուի և մենք էլ կարողանանք գործել. մի մտանք թէ մեր ժողովրդի կեանքի պայմանները այնպէս են որ հոգեւորականը եթէ միայն մեր ժողովրդին սիրում է, աւելի շատ միջոցներ ունի գտակար լինելու նըրան:

— Բայց մինչև այդ բարի ժամանակի գալը, ձեր երիտասարդութիւնը ձեր եռանդը կանցնեն: Դուք տարի-

նար, բան մը որ քահանաներու գրքէն դուրս է: Միայն կը յանձնարարենք իրեն որ ամենօրեայ եկեղեցական արարողութիւն կատարելու փոթ տանի:

Մուշիւն. — Տ. Վարդան, Մշոյ գիւղերէն, անտանելի խոնակիչ սրբանը գործը զարոյց չը բանալ տալու աշխատին է: Ուսումնը բուռած բաշէ կ'ազած իսկ. բայց արձաթիւրութիւնը լաւ սեյտած:

Պրախա. — Ստեփան քահանայ Նիկոմիդիոյ Չէնկիլէր գիւղէն: Անուս, ու փառասէր փորձանք մը: Իր դայիակազական շատ մը գործերուն համար, ժողովուրդին աչքէն բոլորովին ելած, գրեթէ բոնութեամբ պաշտօնավարող մէկը: Ամէն ճամբորդի անանկ մը կը ցուցնէ թէ՛ կաշխատի զպարսց մը բանալ. բայց չը յաջողիր. մինչդեռ այդ քահանային բուն արգելք եղողը ինքն է, որովհետեւ իր ամսականն րանթիւմ մը գոհել չուզեր այդ սղօգտու գործն իրականացնելու համար: Ասկէ զատ հիմա թաղականն ալ ինք է հոգաբարձուն ալ, վայ զէ՛ կ'ընդդին:

Կալաց. — Տ. Դեռուդ Փափագեան Ատրիանուպոլսիցի, Սաղ չի վեաց որ չի խաղար խեղճ կալացիներուն պիլսուն. իսկ իր բրած քառթիւններուն ու մատնութիւններուն հաշիւը չկայ. ոչ ոք կարող չէ իրեն հակառակ ըլլալ ու այս քաղաքին մէջ մնալ. անմիջապէս թմբական հիւպատոսին ձեռքով հեռացնել կուտայ: Ո՞վ արտաքսել տուաւ Դաշնակցական Պ. Սահակ Մարգարը, Արսէն վարդապետը, Ի. Թիւնեան եպիսկոպոսը Տ. Տաճատ եւ Տ. Սարգիս քահանաները, Այս բոլորը գործողը Տ. Դեռուդը եւ ուրիշ աւելի անբարոյական քահանայ մը, որուն վրայ ստիպուալ

ներով էլ միտնին յատուկ ծոյլ անշարժ անմիտ և աննպաստ կեանքը անցնելով. պէտք է ենթարկվէք միջավայրի ազդեցութեան, և բարի ժամանակը եկածի միջոցին, գոցէ դուք ինքնից արդէն, արամադութիւն չունենաք ժողովրդի մէջ մտնելու նրան ծառայելու համար:

— Ու շատ հաւանական է, միջամտեց, մի երրորդը, որ ոտտիկանութեան մէջ քարոզար էր: Ինձ օրեակ վերցնենք. դուք զիտէք որ ես ուսու յեղափոխական էի, գիտէք որ ես համալսարանից արտաքաված եմ ազատական լինելու համար, դուք գիտէք որ կովկասի բարձրագոյն կրթութիւն ոտացող հայ երիտասարդութեան մէջ առաջիններից մէկն էի որ ապոտամբութիւն ու յեղափոխութիւն էի քարոզում, եւ այսօր ես պետական պաշտօնեայ եմ. և որ հիմնարկութեան մէջ, ոտտիկանութեան ուր կրթութեամբ մարդին ծառայելու անպատուութիւն է համարվում ամբողջ Ռուսաստանում. միհի միարկութիւն, որից ամէնքը խոսափում, ամէնքը զրգովում են:

Անշուշտ այդ օր ես ձեր մէջը չէի լինիլ. եթէ իմ անցեալը չը լինէր, բայց ես համոզված եմ որ այդ անցեալն էլ բաւական չէր շատերի համար-իմ իմ ներկայութիւնը ներելու:

Կեանքը ինձ փշացրեց, ջախջախեց, բայց երկու տարի ոտտիկանութեան մէջ ծառայելու ինձ շատ բարոյական հիմքերից զրկեց:

Շիմա օրերով, շաբաթներով, երբեմն ամբողջով չեմ տարբերվում իմ պաշտօնակիցներից, և ոչ մի բանով այն մարդկանցից որոնք ինձ համար մարդկութեան ամէնտարր տարրն էին կազմում Ռուսաստանի մէջ:

ենք այս յօդուածէն դուրս առանձին կերպով խօսիլ եւ կամ յանարարել որ ուրիշներ խօսին՝ մօտ ժամանակէն: Վերջապէս կալացի քահանան բոլորովին արուած մէկն է, գուցէ պառնանք նորէն երբ առիթը գայ:

Պիրեոս. — Կարապետ քահանայ Տիւլպէնեան Պոլսիցի, բարի մարդ մը է կըսուի, բայց մեզ բարութեան աւելի գործունէութիւնը պէտք է, աւելի որ այս ալ մտային կարողութեան զուրկ է:

Թուրքա. — Այս տեղի ժողովուրդին վերջին ծայր ազգատու թեան պատճառաւ, ամէն ատեն քահանայ չը գտնուիր, աժան ամսականով չեն հաճիր մեր տէրպապաները, մինչդեռ բնաւ չեն խորհիր թէ իրենք կուտ մը արժանիք ու արժէք ալ չունին իրականութեան մէջ, կըսուի թէ հիմա քահանայ չը կայ հոն, այդ մասին գրած նամակիս պատասխանն ալ չտուի:

Թրկու-Օզնա. — Հաւ երկու են. Յարութիւն քահանայ Սարգսեան և Տ. Դեռուդ Միքայէլեան, երկուքն ալ Պուրթէշիցի: Մտաշիւրը բաւական պարտաճանաչ ու իր ժողովրդէն սիրուած է միշտ. իսկ երկրորդը շատ անհանդարտ ու անպատշաճ կեանք մը կ'ունենէ՛ հոկատակի պատրիարքարանէն քանիչս իրեն եղած խիտ ազգարարութիւններուն. կը յանձնարարենք որ քիչ մը լուրջ ըլլայ ու իր հօտին պահանջներուն հետ համաձայնի:

Պարսիւ. — Տ. Գրիգոր Դազարեան բնիկ Մուշուցի, գործունեայ մարդ մէջ այս. իր ձեռքէն եկած օգնութիւնները բնաւ չը խնայեր ու տեղացիին կամ պանդուխտի մէջ խոսրութիւն չընէր: Իրաւ է թէ այն-

Անցեալ օր դաւառում ես մի հին ընկերով հանդիպեցի որ յեղափոխական պրօպագանդայի համար շրջելու էր դուրս եկել. զգացի որ նա ինձմիկ խոսափում է. և շատ լաւ էր անուս. որովհետեւ իսկապէս ես կարող էի նրա համար փոստակար լինել. չէ որ ոտտիկան էի. նա շատով հեռացաւ այն տեղից: Բայց նրա ինձնից խոսափելը շատ վատ ազդեց ինձ վրա. ես յիշեցի իմ անցեալը. յիշեցի թէ՛—եթէ ես ոտտիկանութեան պաշտօնեայ չը լինէի, այդ վաղուս ընկերովն հետ համարվելով, միասին հանրութեան դործի օգտին մի քան կանէինք: Իմ մէջ կար ծագեց վեհադատնալուց յետոյ անմիջապէս պաշտօնից հրաժարվել. բայց մինչև վերադառնալ, խղճիս խայթը մարտէր էր: Միջավայրը ինձ սուսնել է. ուրեմն ինչու չի կարելի գուշակել որ հայ սուբբը, կամ նրա նման կրթված վարդապետները—որոնք վեղար գնում են ժողովրդին օգտակար դատարար համար. մի զեղեցիկ օր այդ բոլոր զգայունները կորցնեն:

Ես էլ մտածում էի որ բարի-կրթված, զարգացած պաշտօնեան ժողովրդին մեծ օգուտ կարող է բերել. սակայն տեսայ և տեսնում եմ որ բոլորովին անկարելի է. ժողովրդի շահերը եթէ շատ պաշտպանեցիր նոյն հիմնարկութեան մէջ պետութեան համար կակածելի մարդ ես նկատվում:

Ով ուզում է ժողովրդին ծառայելու համար մեր ժողովրդէն-ոչ մի տիտղոսի հովանաւորութեամբ թող չը մտնի նրա մէջ. այլ իր ժողովրդի մարդ, իր սրտին և խելքին յինված. եթէ յաջողեց լաւ, եթէ չը յաջողեց գոնէ ինքը այնքան չի փշանայ:

(Շարունակելի)

ՎԱՐԴՈ

չափ ուսեալ չէ, բայց տեղական լեզուն լաւ գիտնալով բաւական ազդեցութիւն չաճած օտարներու առջեւ ալ:

Մինակ կը լսենք թէ եկեղեցին կիրակի օրերը կը բանայ, ուստի պարզապէս պարտքը կատարած կըլլայ եթէ ամէն օր բանալու ըլլայ սպասենք:

(Շարունակելի)

ԹՐԻՊՈԼԻՏԷՆ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— 0 —

Սիրելի ընկերս . . .

«Անգլիական» շոգենաւերը թէ եւ եկան, բայց տաճկին օգնելու համար եկած են. կրուսի թէ Գաղղիոն որոշած է երկիրը զըրաւել, թերևս ցամաքէն յարձահի տակաւին Գաղղիական մարտանաւերը եկած չեն. Տաճիկ կառավարութիւնը մեծ ընդունելութիւն կընէ՝ Անգլիոյ, զինուորիները արգէն ցամաք ելած են և ալ այժմ այս չափ. կը յուսամ առաջիկայ նամակաւ բուսական տեղեկութիւններ տալ:

Հին Հնչակեան մը:

12 յունվար. Թրիպոլիս

Սիրելիս, արգէն մտադիր էի քաղաքին շուրջերը տեղի ունեցած արաբներու տաճիկներուն դէմ ունեցած պատերազմը պարզել. արգէն գու նախորդ նամակներէս կռահած պիտի ըլլան:

Հիմակ ընդարձակօրէն գրեմքեզի:

Տաճիկ կառավարութիւնը արաբներէն զինուոր կուզէր առնել, նաեւ տուրք. բայց անոնք միշտ կը հակառակէին. Գաղղիոյ Թունուզը զրաւելէն ի վեր արաբները բոլորովին արթնցած են. տեսան Գաղղիոյ հարուստ եւ կրթեալ ժողովուրդը ըլլալը տեսան նաև թէ ան արաբներուն ինչ տեսակ հանգստութիւն տըւաւ. ըսին ինչո՞ւ ալ մենք այսպէս ստրուկ ապրինք . . .

Այժմ լաւ գիտեն թէ տաճիկը երթալով իր առաջուան փառքը կը կորսնցնէ. ալ ամբողջ աշխարհի ժողովրդոց երեսէն ինչ կած աղգ մը եղաւ սե ատար համար ալ բոլորովին զըզուեցան տաճկէն, մինչեւ անգամ տաճկին գրամը ձեռք առնել իսկ չեն ուզեր:

Երկու երեք ամիս առաջ, երբ այդտեղի վալին սուլթանի հրամանաւ արաբներէն տուրք եւ զինուոր ուզեց առնել, արաբները դիմագրեցին, որպէն տուրք չունենէ պատրաստութիւն տեսած էին. Գաղղիայէն նաեւ բոլոր բաւական ղէնք բերել տուած էին գաղտնի, երբ արաբները գի-

մագրեցին վալին մեծ զօրք հանեց դիմագրողը սպաննելու համար . . .

Գաղաքէն մէկ ժամ հետի, «ճումաա լալար»-ի կոչուած տեղը արաբները ի թուրք զինուորները վերար դիմաւորելով մեծ ընդհարում ունեցան. երկու կողմէ ալ բաւական զոհ տուին. վալին նորէն զօրք զրկեց, թնդանութիւնով միասին, որովհետեւ կուզէր այդ ապստամբութիւնը տեղնուտեղը խլղել, որպէս զի միւս արաբներու մէջ չը տարածայնուի, որոնցմէ շատեր արգէն ուրիշ տեղեր ալ կառավարութեան դիմադրած էին:

Խուրք կառավարութիւնը շատ արաբ շէյխեր ձերբակալեց եւ քստրեց իբր թէ Պոլիս. բայց ո՞վ գիտէ թէ ուր: Այժմ արաբներուն գլխաւոր ճէյխերը եզրկատու են և ժողով ունին, տեսնենք ի՞նչ որոշում պիտի տրուի: Խընդիրը առ այժմ դադար վիճակի մէջ կը գտնուի. վերջապէս օր մը եւրոպական զրահաւորները Թրիպոլիսի առջեւ պիտի երեսնան, 4 մեծ տէրութեանց դաշնագրութեամբ քաղաքս խալացիներուն տրուած է. բայց խնդիրը ան է որ արաբները Խալացիները չեն ուզեր այլ Գաղղիացիները: Գաղաքիս մէջ ո եւ է քրիտոնէի համար վախ մը չը կայ . . .

ՇԱՆԹ

Յիլիպէ 20 յունվար

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐԸ

— (0) —

Եւրոպայի ընկերվարականները մինչեւ օրս միայն կաշխատէին երեսփոխանական ժողովներու մէջ շատ երեսփոխաններ ունենալ, և միշտ հակառակօրէ հանդիսանալ այնպիսի օրէնքներու որոնք քրիստոնէական էին բանտը դասակարգին համար:

Սակայն վերջերս ընկերվարականներու մէկ մասը համոզուեցաւ որ միայն բազմութիւ երեսփոխաններ ունենալով և քարոզելով զգալի օգուտ մը չը պիտի կրնան բերել բանտը դասակարգին, որովհետեւ երկրին վարչութեան մէջ իրենք գործնական զէր մը չունին, որոշեց թեթեւ զիջողութիւններ ընել և աշխատիլ բարձրագոյն վարչութեանց մէջ պաշտօն ստանձնել:

Ասոր առաջին օրինակը տուաւ Յրանսայի մէջ ընկերվարական Միլլան, որ Վալտէկ Բուսի նախարարութեան մէջ վաճառականութեան նախարարի պաշտօնը ստանձնեց: Միլլանի այդ

քայլը մեծ իրաւանցում՝ ձգեց Թրանսալի ընկերվարականներու մէջ, պառակտումներ տեղի ունեցան, հռչակուոր Թորէս շերմ պաշտպան հանդիսացաւ Միլլանի և ստուար բազմութիւն մը գրաւեց:

Նոյն զիջողութիւններու հոսանքը սչուած է և Խոալիոյ ընկերվարականներուն մէջ: Անոնց մէկ մասն ալ որոշած է կառավարութեան մէջ ղեկավարող պաշտօններ ձեռք անցնելու աշխատիլ:

Ու շատ հաւանական է որ ամբողջ Եւրոպայի մէջ, ընկերվարականներու գործնական և աւելի հանդարտ մասը այսուհետեւ ձգտի վերոյիշեալ ընթացքը բանջօգուտ գործաւորներու աւելի շատ նպաստաւոր օրէնքներ ստեղծելու գիտումներով:

Ապագան միայն պիտի կարողանայ պարզել ընկերվարականներու ո՞ր մասը աւելի օգտակար մասածած է. արդեօք անոնք որ զիջում չեն ուզեր ընել ներկայ ընթացքներու մէջ վարիչի դէր ստանձնել թէ զիջում ընողները:

•••

ՅՍՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

— 0 —

Կը խնդրուի ամէն անոնցմէ որոնց քով որ ընթերցարանը գիրք ունի անյապազ վերադարձնել ընթերցարանին:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Եզրկատուի առաջնորդ Այվազեան եպիսկոպոս ծանրապէս հիւանդ է:

Գարակէօզեան որբանոցի կառայումը արտօնող իրատէն ստացուեր է դատական նախարարութեանէն:

Ամօնայն հայոց կաթողիկոսը առանձին գրով մը Երեցեան եպիսկոպոսին յանձնարարած է կիլիկիոյ թեմին վերաբերեալ մէկ քանի եկեղեցականներ հետք անպատճառ Սիւ տանել:

Երուսաղէմի պատրիարքը տնօրէն խորհրդը նամակներով կը յայտնեն որ գոհ պիտի մնան եթէ Երեցեան ընդունի Սիւ կաթողիկոսութիւնը:

Կաթողիկոսը, կրօնական ժողովին տուած մանրամասն տեղեկութիւններու համաձայն լուծեր է փաստաբան Պարոնիկեանի և իր կնոջ ամուսնութիւնը:

որ երկու կողմէն ալ կը պահանջուէր:

Գէորգ Բարխուդարեանի 40 ամեայ գործունէութեան տարեգարձը Տիգրիսի մէջ տօնուեր է շատ նամեատ կերպով:

Խառն ժողովը, պատրիարքի նախ զահուլթեամբ, իր վերջի նիստի մէջ նկատողութեան առնելով Երեցեանի հրամարական թէ և Միաձայնութեամբ պատճառաբանեալ նկատած է զայն, այսու ամենայնիւ որոշած է ինդրել Երեցեանէ ընդունիլ Սիւ կաթողիկոսութեան բարձր պաշտօնը որով կատարած պիտի ըլլայ թէ Սիւ թեմերուն և թէ խառն ժողովին փափաքը:

Ժողովը կը յայտարարէ նաև որ իր կողմէն է դիւրութիւն չը պիտի ջլանայ նորընտիր կաթողիկոսին իր պաշտօնին գարծօն ընթացքին մէջ:

Կաթողիկոսը Պարոնիկեանի մուսնութիւնը լուծելով իրենա իրաւունք կուտայ կրկին ամուսնանալու. բայց կնոջը ոչ:

Ամերիկայի Պրովիտէնս քաղաքի հայերը 50 անդիական ոսկի շրկած են պատրիարան որբերու համար:

Վերջին «Հանդէս ամսօրեայի» մէջ բուսական լուրջ քննադատութիւն մը կայ հայ մամուլի մանաւանդ Պոլսոյ մամուլի մասին:

Պոլսոյ մամուլին սիրահարներուն խորհուրդ կուտանք այդ յօդուածը կարդալու, որ խմբագրականի տեղը կը բռնէ:

Բաղձավէպի մէջ կայ Միքայէլ նալպանդեանի համառոտ կենսագրութիւնը յօդուածագիրը մեծ համակրանքով կը խօսի կողմիս եան այդ կրակոտ հրապարագրի մասին:

Առհասարակ, «Բաղձավէպ»-ը կը ջանայ հետզհետէ ժամանակի ոգուն համաձայն և ժողովրդեան ամէն խաւերուն մատչելի հանդէս մը դառնալ. Բաղձավէպ այլ ևս այն հանգիստներէն չէ որոնք դժգոհութեամբ կը կարգացուին և չի ալ նմաներ էջմիածնի «Արարատ»ին:

Վառնայի աղջկանց վարժարանին համար կարող ուսուցչուհի մը կը փնտռուի որ կարենայ զասայտեղի Հայերէն, ազգ. պատմութիւն, թուաբանութիւն և աշխարհագրութիւն:

Գոհացուցիչ ամսաթուղակի Հեռուար տեղերէ եկողներուն ճանապարհածախսը կը վճարուի:

Փափագողք գիմեն ընդ փոյժ անձամբ կամ նամակաւ Ազգ. երկսեռ վարժարանաց Հոգաբարձութեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա.

Թուրք կառավարութիւնը Իտալիայէն պահանջած է Մահմուդ փաշայի արտաքուստ Իտալիայէն սակայն Իտալիա մերժած է այդ պահանջը կատարել:

Փաշան Ֆրանսա գացած է, Սուլթանը Ֆրանսայէն ալ պիտի խնդրէ իր մահապարտ փեսային հեռացումը:

Միսս Սթոնի մասին կրկին զանազան լուրեր կը պատին. ոմանք կըսեն թէ Զարգէն ազատուած է, ոմանք ալ կըսեն զեռ չէ ազատուած:

Ռ Ո Ւ Ս Ի Ա.

Բօսիա թերթի խմբագիր Ա. փիթէատով ձերբակալուած և 5 տարով բնակարան (Սիպեր) քստրուած է, որովհետեւ կայսերական տան վրայ ալարանորէն յարձակում գործած է:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա.

Նախկին նախարար Պէլինով յանկարծակի բերնի արիւնհոսութենէ մեռեր է:

Կեղծ մարկաներու խնդրոյն պատճառաւ ձերբակալուած Պետեփաքի սպայութենէ հրաժարեցուցուած և քաղաքական իշխանութեանց յանձնուած է դատուելու համար:

Ա Ն Գ Լ Ի Ա.

Լօնտօնի թերթի մը կը հաղորդէ որ Անգլիա և Ամերիկա Գաշնակցութիւն մը կազմած են՝ ամբողջ Եւրոպայի դէմ:

Իմացած են որ Անգլիոյ արտաքին գործոց նախարարը Հոլանտայի կառավարութեան պատասխանած է որ անոր միջամտութիւնը Թրանսիլի պատերազմին վերջ տուլու համար գործնական տրտէք մը չունի որովհետեւ միջամտողները լիազորութիւն չունին ոչ կռուող պօսրներէն և ոչ ալ անոնց պատգամաւորներէն:

Ա.Զ.Գ.

Մեր բաժանորդներէն մէկ մար չը նայած մեր յայտարարութեանց, իրենց պարտքը չը ճանչացան, ու դեռ կը շարունակեն թերթ ստանալ:

Այդ անպարտաճանձն ճնտցորդներուն ժամանակ կուտանք մինչեւ փետրուար քսան, ու այնուհետեւ պիտի յայտարարենք անունները. իսկ Պուլկարիոյ մէջ չը վճարող բաժանորդներէն օրէնքի գիմելով պիտի գանձենք:

Շարժում միշտ զրկուած է ով ուղած է. ոչ ոքի ատանց ուղելու, մանաւանդ նոր խմբագրութեան միջոցին, թերթ չէ զրկուած. եւ այդ ուղղութեամբ բոլոր նամակները պահուած են:

Բաժանորդները թող հասկնան որ խմբագրութիւնս թուղթի, մարքայի, տպարանի, գրաշարի ստակ կը վճարէ, և երբ իր բաժանորդները իրենց չնչին պարտքը չեն վճարեր, խմբագրութիւնը հազարն պարտքերու տակ կ'իյնայ, թէ ինք կը վնասուի, և թէ իրեն հետ գրամի հետ գործ ունեցողները:

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն
Լաթ ներկելու և քիմիապէս մաքրելու:
Վ. Ք Ռ Օ Յ Ի Լ Օ Յ
ԵՒ
ԻՎ. Մ. ԿՕՔՕՅ
ԲՈՒՍՉՈՒՔ
Սոյն գործարանի մասնաճիւղը որուն կառավարիչն է Բէթր ԿԼՈՒՇԳՕՅ «Իզլիստնիկ» խմբագիրը, քաղաքային պարտէզին դիմացը:
Կը ներկէ կանանց և մանկական գգեստներ, մետաքսէ, բրդէ և բամբակէ գործածքներ, նոյնպէս վաճառականական ապրանքներ ու մանուածքներ, ներկը չի թափիր, միայն ներկելու տալիք նիւթերը մաշած չի պիտի ըլլան:
Գիները չափաւոր են:

Լ Ո Յ Ս Ե Ս Ս Ի

Sof. Վ. Snsmlkuelցի և Ե. Թոփչեակցի
„Die sozial-ökonomich Türcei“
Հաւաքական աշխատութիւնը Հայկական հարցի եւ ընդհանրապէս Թուրքիայի մասին:
Գինը 2 մարկ ճանապարհածախսով գիմել՝ Berlin, Verlagshandlung R. Prager, W. ն 7

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ գիմում ընելու համար պէտք է գիմել հետեւեալ հասցէով:
Իւնիոն Տէ Զիլիսիան Արւ.
Լ'Էօրոք րիւ ջր Լ'Էֆօլ ջր Շիլի 2

Սուխ Ժընէլ
Կարգողիւ Յանձնաժողով

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆիլիպէի «Հայկական երգեցիկ խումբը» աւ շրջանին մէջ վերսկսած ըլլալով արդէն իր պարտապաշտները, ձեռնարկած է նաեւ պարբերաբար հրատարակելու եւրոպական ձայնագրութեամբ հայկական հին եւ նոր քառաձայն երգեր, մաքուր թղթի վրայ: յստակ վիճակի:

Այո առթիւ երգեցիկ խումբի վարչութիւնը ներկայիս կը յայտնէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտաէր հայ երիտասարդութեան, որ եթէ առ երգերէն փափագողներ կան, հաճին գիմել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով «մէկ թուղթին» համար 20 սանթիմ. փոստի ծախսը մեր վրայ: Կան երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղկանան:

Արտասահմանի համար 35 սնթ.
Ֆիլիպէ վարչ. «Հայկ. երգեցիկ խումբին»:

Հասցէ՝ Agop - Sivadjian Philippople

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայցերեւրոպում հիմնել մի գրադարան, որ նպատակ է գրել ծանօթացնել արտասահմանի Հայ ուսանողութեան եւ ընդհանրապէս հասարակարգը անձանց հայոց ներկայ կիսանքին վերաբերեալ հայերէն եւ օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համեմատ թիւ որի համար յայտնուած ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը եւ խնդրում ենք այն անձանց հատուտութիւններին, որոնք կամենում են գրքերով եւ գլխաւորութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին ուղարկել հետեւեալ հասցէով:
A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

Կ Ա Գ Ա Ն Դ Չ Է Ք

Նոր լոյս տեսաւ այս գրկոյքը արձակ և ոտանաւոր:
Հեղինակը զայն գրչի կրօսանք անուանած է, և իրաւ ալ գրչի կրօսանք է:
Գինն է 40 սնթ. կը ծախուի վարնայի մէջ Զարպհանէլիան գրատունը:

L'EUROPEEN

Շարաթաթերթ քաղաքական, վիշազային իրաւունքի, բնկերական հարցերու, գրական եւ զեղարուստական:

Տարեկան 15 ֆր.
Վեցամսեայ 8 ֆր.
Հասցէ 24 rue Dauphine Paris VI

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

Հայ լրագիրներին լոյսը խմբագրներէր խնդրում է իրենց թերթերից մի մի օրինակ զրկել հետեւեալ հասցէով:
Կ. Արապեանց Ճիւղողի (Մէր Բոսթ).
բաժանորդագիրը կուղարկուի հէնց որ առաջին համարները ստացվին:
Կ. Արապեանց:

ԽՊՐԱՒԻՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ:

Գիները յոյժ դիւրամատչելի:
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԻՆԻՍԻՆ

Ա.Զ.Գ.

Բաղէչի կուսակալութեան պատկանեալ Յուրդափ գիւղէն Պէթր Ասատուրեանի, հաստատակալ չէկ պէխով ու յօնքերով, 6 ամիսէն ի վեր ուր լինելու անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը միտիթարել հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեան հաղորդելով:

Ա.Զ.Գ.

Կը ծախուի 1896ին փետր. 2րդ իշխան Պօրթի մկրտութեան առթիւ տպուած գործածուած նամակագրոյժներ 1-5-15-25 սանդիմ:
Գիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ
Վառնա

ОТГОВОРНИКЪ :

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна